Հայ-ղազախական առևտրատնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողով

Հայ-ղազախական առևտրատնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովը հիմնվել է համաձայն 1999թ. սեպտեմբերի 9-ին կնքված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև ազատ առևտրի մասին» Համաձայնագրի:
2016թ. հոկտեմբերի 5-7-ը Աստանայում կայացել է հայ-ղազախական առևտրատնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 6-րդ նիստը: Հայկական կողմից հանձնաժողովի համանախագահն է՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանը: Հերթական նիստը նախատեսվում է անցկացնել 2017 թվականի աշնանը՝ Երևանում: